

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2008 թվականի դեկտեմբերի 12-ի

ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բելառուսի Հանրապետության Կառավարությունը, Ղազախստանի Հանրապետության Կառավարությունը եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

հիմնվելով 2008 թվականի հունվարի 25-ի «Միասնական մաքսասակագնային կարգավորման մասին» համաձայնագրի 6-րդ եւ 5-րդ հոդվածների դրույթների վրա,

տնտեսական ինտեգրման եւ բարեխիղճ մրցակցության խորացմանն օժանդակելու նպատակով,

առաջնորդվելով միջազգային առևտրի համընդհանուր ճանաչում ունեցող նորմերով եւ կանոններով,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Կողմ հանդիսացող պետությունների մաքսային տարածքներ կամ Մաքսային միության մասնակից պետությունների միասնական մաքսային տարածքներ ներկրվող ապրանքների նկատմամբ տրամադրվող սակագնային արտոնությունները ապրանքների ծագման երկրից անկախ են կիրառվում:

Հոդված 2

Կողմերի կողմից Մաքսային միության հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով) Միասնական մաքսային սակագնի վարելու լիազորություններ ընձեռելու ամսաթվից, Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Կողմ հանդիսացող պետությունների մաքսային տարածքներ կամ Մաքսային միության մասնակից պետությունների միասնական

մաքսային տարածք, «Միասնական մաքսասակագնային կարգավորման մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրի 5-րդ հոդվածով եւ 6-րդ հոդվածի 1-ին կետով չնախատեսված դեպքերում, ապրանքները ներկրելու ժամանակ կիրառվող արտոնություններն իրականացվում են բացառապես կոնսենսուսով կայացված Հանձնաժողովի որոշումների հիման վրա:

Հոդված 3

Սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու ամսաթվից մինչեւ Հանձնաժողովին Միասնական մաքսային սակագնի վարման իրավասություններ վերապահելու ամսաթիվն ընկած ժամանակահատվածը՝

Կողմերը տեղեկացնում են Հանձնաժողովին իրենց կողմից կիրառվող սակագնային արտոնությունների եւ Կողմ հանդիսացող պետությունների օրենսդրություններում սակագնային արտոնություններ կիրառելու հարցերով փոփոխություններ ներմուծելու մասին,

Հանձնաժողովը Կողմ հանդիսացող պետությունների օրենսդրությունների համեմատական վերլուծություն է իրականացնում՝ սակագնային արտոնություններ կիրառելու հարցերով, եւ Կողմերի մասնակցությամբ բանակցություններ է կազմակերպում՝ «Միասնական մաքսասակագնային կարգավորման մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրի 5-րդ հոդվածով եւ 6-րդ հոդվածի 1-ին կետով չնախատեսված սակագնային արտոնություններ կիրառելու դեպքերի առնչությամբ համաձայնություն ձեռք բերելու նպատակով:

Հոդված 4

Կողմերի համաձայնությամբ՝ սույն Արձանագրությունում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

Հոդված 5

Կողմերի միջեւ սույն Արձանագրության մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են համապատասխան Կողմերի խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում,

համապատասխան Կողմերից որեւէ մեկի նախաձեռնությամբ, այն փոխանցվում է Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Հոդված 6

Սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու, դրան միանալու եւ դրանից դուրս գալու կարգը սահմանվում է «Մաքսային միության իրավապայմանագրային բազայի ձեւավորմանն ուղղված միջազգային պայմանագրերն ուժի մեջ մտնելու, դրանցից դուրս գալու եւ դրանց միանալու կարգի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6–ի արձանագրությամբ:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2008 թվականի դեկտեմբերի 12–ին, մեկ բնօրինակով՝ ռուսերենով:

Սույն Արձանագրության բնօրինակը պահվում է ավանդապահի մոտ, որը Եվրասիական տնտեսական համայնքի ինտեգրման հարցերով կոմիտեն է՝ նախքան Հանձնաժողովի ավանդապահի գործառույթները փոխանցելը:

Ավանդապահը յուրաքանչյուր Կողմի ուղարկում է սույն Արձանագրության հաստատված պատճենը:

Բելառուսի Հանրապետության Կառավարության կողմից՝	Ղազախստանի Հանրապետության Կառավարության կողմից՝	Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից՝
(ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)